որ թուերի կողքին դրուելով գումար է կազմում:

Հայ ազնուականութեան սիառեմը միշտ անասնուութեան աստիճանի է հաւասարեցրել ժողովրդի վիճակը, և դրա համար է որ Օշականցի Մօրիկը հող չի գտնում իւր հայրենիքում զարգանալու, բայց Յունաստանում դառնում է կայսր*): Այդ մէկը միայն ես օրինակի համար յիշեցի. Ձեզ թող կանեմ յիշելու բոլոր հայոց երևելի տաղանդները, որոնք փայլել են օտար ազգաց մէջ և օտար ազգաց օգտին: Ժողովրդական դասակարգից բարձրացած հերոսներ մենք չենք ունեցել մեր մէջ. տորուկների միջից երբէք հերոս չի ծնվել:

Ահա այդ հայեացքով ես նահանգիին եմ գնում

չև հանքի կառավարութեան ձեռք անցնելը պատրաստում էին քաղքեղ: Դա հին հայոց արուեստագործութեան շարունակութիւնն է, որ հասնում է մինչև մեր օրերը: Բայց պատմութիւնը ոչինչ չի յիշում, թէ այդ ամենը երբ են մշակվել: Գետաբեկի (Գետաբեկ) յոյն բնակիչները աւանդութեամբ պատմում են, որ Գետաբեկի այժմեան գերմանացի Սեմենս եղբայրների պղնձահանքը հնում հայոց թագաւորական յանցաւորների համար նշանակված հանքահորերն են եղել, ուր բազմաթիւ դատապարտ-

---

*) Ծ ա ն օ թ. Հետաքրքիրների համար կը յիշեմ, որ մինչև այսօր էլ Օշականում մնում է Մօրիկենց տունը, որի դռան կանդնեցրած է մի արձան արաբիլի բոյնը գլխին. դա կայսրն է կառուցել իւր հանգուցեալ հօր գերեզմանի վերայ: